**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/17 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի սեպտեմբերի 27-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/17 գնման պայմանագրում 2024 թվականի մարտի 6-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 28.12.2023թ. N2323-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/17 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5**
**27.09.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/17 գնման պայմանագրի**

ք. Երևան «06» 03 2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Շինսերտիֆիկատ>> ՍՊԸ-ն, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն որոշումը և ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական **ծառայության** մատուցման համար Կողմերի միջև 27.09.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/17 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033868
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

__________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

__________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
27.09.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-22/17 գնման պայմանագրի
«06» 03 2024թ. կնքված N 5 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Մինչև 2023թ. վճարված գումար | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540/1 | ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն | 16 255 700 | - | - | 3 951 100 | 9 877 800 | 9 877 800 | 9 877 800 | 14 816 600 | 14 816 600 | 14 816 600 | 19 755 500 | 19 755 500 | 19 755 500 | 19 755 500 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011033868
ՀՎՀՀ 02563827
Գլխավոր քարտուղար՝
Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն՝
Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.